№ 10 Յունվարի 21 Շաբաթ 1884 Յունվարի 21 Շաբաթ № 10

ՏԱՍՆ ԵՒ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։ Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція «Мшакъ».

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2½ ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ „ՄՇԱԿ“

ԱՄԵՆՕՐԵԱՅ ԼՐԱԳԻՐ

(ՏԱՍՆ ԵՒ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ)

ՆԵՐԿԱՅ **1884** ԹԻՒՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ՆՈՅՆ ԴԻՐՔՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄԱՅՈՎ։

ՊՐՕԳՐԱՄ

I. ՏԷՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ։ II. ԱՌԱՋՆՈՐԴՈՂ ՅՕԴՈՒԱԾՆԵՐ։ III. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ընդհանուր յօդուածներ, թղթակցութիւններ, լուրեր։ IV. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ընդհանուր յօդուածներ, թղթակցութիւններ, լուրեր։ V. ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։ VI. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ VII. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Ֆելիետոն, վէպեր, ինքնուրոյն և թարգմանական յօդուածներ գիտութեան ամեն ճիւղերից, թղթակցութիւններ։ VIII. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ։ Տարեկան 10 ռուբլի, վեց ամսվայ 6 ռուբլի, իւրաքանչիւր ամսվայ 1 ռուբլի։
ՀԱՏՈՎ համարները 5 կոպէկ։
ՀԱՍՑԷՆ։ Тифлисъ, редакція «Мшакъ».

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՒԾԵՐՈՒՆԻ

ВЪ ЭЧМІАДЗИНѢ

съ разрѣшенія правительства, съ 12-го сего января, открыта сельская аптека А. АКОПЯНЦА.

ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

կառավարութեան թոյլատրութեամբ բացված է դեղատուն (аптека) *այս յունվար ամսից։* Ե. Յակովբեանց։ 1—3

ԲԺՇԿԱՊԵՏ

Գ. Գ. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑԸ

Վերադարձել է ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ և ընդունում է հիւանդներին ԿԱՆԱՆՑ, ՆԵՐՔԻՆ և ԿՈԿՈՐԻՒ հիւանդութիւններով։ Սերգիեվսկայա փողոց, տուն ՇԱՀՊԱՐՈՆԵԱՆՑԻ։

2—2 (չ. չ.)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ծխախոտի գործարանները և նոցա առևտուրը։ Յարութիւն արքեպիսկոպոսի կենսագրութիւնը։ Նեղքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Պարսկաստանից։ — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Մի պատկեր Թիֆլիսի վաճառականների կեանքից։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԾԽԱԽՈՏԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԸ ԵՒ ՆՐԱՆՑ ԱՌԻԵՏՈՒՐԸ

—

„Новое Обозрѣніе“ լրագրի ներկայ թիվ № 14-ի մանր լուրերի մէջ Թիֆլիսի ծխախոտի գործարանների և նրանց առևտրի մասին գրված էին մի քանի անճիշդ տեղեկութիւններ, որոնք և արտատպվեցան „Մշակ“ № 7-ի մէջ։

Ի նկատի ունենալով, որ այդպիսի անստոյգ տեղեկութիւնները կարող կը լինեն վնասել ծխախոտի գործին, որի հետ կապված է հազարաւոր մշակող անձանց ընտանիքների հացի խնդիրը, պարտ եմ համարում պարզել այդ հանգամանքը, իբրև գործի մանրամասնութեանցը տեղեակ և յոյս ունեմ, որ նորածաղիկ յարգելի լրագրի խմբագրութիւնը ուշադրութեան կառնէ հրատարակելով այն և իր պատուական թերթում։

Արդէն յայտնի է ամենքին, որ ճշմարիտ, վերջին տարիներում ոչ միայն Թիֆլիսում, այլ և ամբողջ Կովկասում և հէնց Ռուսաստանում ընդհանրապէս առևտուրը բաւական ընկած է։ Անցեալ տարի այդ մասին ինչպէս մեր տեղական հայ և ռուս լրագիրները, նոյնպէս և մայրաքաղաքի թերթերը տեղ տուին մի քանի յօդուածների և կարծիքների, որոնցից երևեցաւ, որ Կովկասի առևտուրի անկման պատճառը փողի կրիզիսն է։ Առևտուրի անկումը, ի հարկէ, շարունակվում է մինչև այժմ։ բայց եթէ այսօր համեմատելու լինենք ընդհանրապէս բոլոր առևտուրների անկման աստիճանը, կը տեսնենք, որ դոցա մէջ ծխախոտի գործարաններինը աւելի նախանձելին է։ Բայց գուցէ ասեն, ինչպէս ես շատերից լսած եմ, թէ ծխախոտը գործածողի համար այնպիսի մի անհրաժեշտ և կենսական հարկաւորութիւն է դարձած, որ նրա առևտուրը ոչ երբէք չը պէտք է ընկնի, դորան ես կը պատասխանեմ, որ առհասարակ առևտրական բոլոր մթերքները և նիւթերն էլ կեանքի անհրաժեշտ պարագաներ են, ուստի և ոչ մի առևտուր չը պէտք է ընկներ։ բայց փորձը հաստատում է, որ նախ ժողովրդի մէջ փողի պակասութիւնը գցում է առևտուրը, և առևտուրներն էլ մի ներքին կապ ունեն միմեանց հետ, այնպէս որ եթէ այսօր մէկը ընկնում է, միւսին, երկրորդին և այլն էլ իր հետ քաշում է դէպի խորխորատը։ Ալիւր ծախողն անգամ, որի ապրանքը կեանքի ամենագլխաւոր և անհրաժեշտ խնդիրն է, տեսնում ենք, որ այսօր դարձեալ գանգատվում է առևտրի թուլութեան վրա։

Իսկ թէ շատերը կարծում են, որ մեր տեղական ծխախոտի արտաբերութիւնը ցածը է իր տեսակով, այդ էլ անիրաւացի է։ Այդպէս կարծողները հիմնվում են միայն նրա վրա, որ Բաստովի, Թէոդոսիայի գործարանների ծխախոտը դեղին գոյն է ունենում, իսկ մեր տեղականը կարմիր և մինչև անգամ մուգ կարմիր, որը և համարում են իբր թէ ստոր, ուշ չը դարձնելով ոչ նրա համին և ոչ էլ հոտին։ Բաստովի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻ ՊԱՏԿԵՐ ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ

—

—Հայր, աղաչում եմ, մի ստիպիր, ես նրա հետ ամուսնանալ չեմ կարող, թէև մահուան պատիժ էլ դրվի վրա։

—Ախր որդի, ինչու է. գեղեցիկ, լաւ հագնված սիրուն աղջիկ է, փողն էլ բօլ. ինչու չը պիտի հաւանես դու նրան։

—Հայր, ես ասեցի, որ արտաքին գեղեցկութեանը և փողին ես նշանակութիւն չեմ տալիս. ես ներքին գեղեցկութեամբ, այսինքն գեղեցիկ յատկութիւններով օրիորդի հետ միայն կարող եմ պսակվել և ոչ այնպիսի մի տգէտի, որի հետ իմ ժամերս և րոպէներս դառն պիտի անցնեն։ Ես երբէք չեմ ցանկանայ հարուստ, բայց տխուր կեանք վարել։ Լաւ է մի կտոր հացով ապրել, միայն թէ ընտանեկան կեանքս խաղաղ և ուրախ լինի։ Կեանքի գլխաւոր պայմանն այդ է։

—Ես երկար էլ չեմ խօսի, որովհետև ինձ ոչ հօր տեղ ես դնում և ոչ մեծի. եթէ իմ կամքս չես կատարի, ուրեմն դու էլ իմ որդին չես և թող աչքս քեզ չը տեսնէ։

—Հայր, հրամայիր մեռնել, այս բօպէիս զրկեմ ինձ կեանքից. պատուիրիր խեղդվել, նոյն բօպէում կատարված տեսնես, իսկ այդ բանում ինձ իզուր ես տանջում. լաւ է մեռնեմ, քան ամուսնանամ այդպէս։

—Ուրեմն որ այդպէս է, կորիր աչքիս առջևից, գնա, որտեղ որ կուզես, քեզպէս անառակ որդի ինձ ոչ լինէր եղած։ Ձեր քէֆի հետևիցն էք հէնց. էլ դարդ չէք քաշում... բաս մի չես մտածում, որ փող ես ծախսել կարդացել, մեծացել, այսօր պէտք է մի դարդի դարման լինես։ Քոյրերդ մեծացել—մէկը այս օրերս կը պսակվի, միւսի համար էլ պէտք է պատրաստութիւն տեսնվի. ամեն մէկը 700 թուման են նստում, էս ո՞րտեղից պէտք է լինի։ Ձեռիդ աշխատանք չը կայ, տղայ ես, գոնէ էդ փողն էլ ա առ բեր էլի...։ Ախր ինչ ես մտածում, որ չես ընդունում է։ Աղջիկ է, բեր, մի փոքր հաց է կուտի կը նստի, էն փողերն էլ մենք մեր առուտրի մէջ կը մտցնենք, տարեկան մի երկու շահի կաշխատենք, տասն մասը՝ մենք կուտենք, մի մասն էլ թող նա ուտի նստի... Ա՛... քեզ խեղք տղին ինչ ասեմ...։

Արմենակը տեսնելով, որ ոչ մի կերպով չէ կարող հօրը հասկացնել և համոզել, որովհետև 20,000 ռուբլին արդէն կուրացրել էր նրա միտքը, նա բոլորը փողի մասին էր մտածում. երբեմն էլ նախահաչիւ էր կազմում, թէ որ փողը ստանան, որքան պիտի ընդարձակէ իր առուտրի ասպարէզը և այլն։ Վերջապէս վճիռ տուից և վերջնական ասաց։

—Ես արդէն իմ աչքադրած և խօսք տուած մշտական հարստութեամբ օժտված օրիորդը ունեմ. ուրիշը չեմ ուզի և կրկնում եմ, որ չեմ ուզի—ասաց և դուրս եկաւ սենեակից։

Իրաւ, Արմենակը արդէն խօսք տուած ունէր հայոց ուսումնարանում կրթվող մի գեղեցկադէմ օրիորդի, որի ուսումնարանից կուրսը վերջացնելուն շատ քիչ միջոց էր մնացել։ Նոքա համարեա ամեն օր տեսնվում էին միմեանց հետ և սիրալիր խօսքերով իրանց դաշն ամրապնդում։

Արմենակի սենեակից դուրս գալուց յետոյ հայրը մնաց այնտեղ մենակ. նա բարկութիւնից կրճտացնում էր ատամները, վերջը թողեց սենեակը և գնաց վաճառատուն։

Արմենակը նոյնպէս շատ սրտնեղած էր. նա չը գիտէր որտեղ գնար, ում դիմէր։ Մի երկու ընկերներ ունէր միայն. նրանց մօտ էլ այնքան գնացել եկել էր, որ մտածում էր՝ չը լինի թէ նրանք էլ նեղանան. բայց ինչ անէր. տանը նստում էր մենակ, սկսում էր մտածել և յուսահատվել, իսկ սիրոյ կայծը մահուան ոյժի չափ զօրութիւն ունենալով միշտ յաղթահարում էր բոլոր նեղութիւններին։ Հօր խօսակցութիւններին վերջ տալու համար Արմենակը ուզում էր հեռանալ, բայց ինչպէս թողնէր Անոյին և կամ ուր և ինչով գնար։

Անցան մի քանի օրեր։ Կարապետ էֆէնդին մի կերպ համոզից Արտէմին և նա դարձեալ մնաց խանութում ծառայելու։

Արմենակի հետ այդպիսի անախորժ խօսակցութիւններ շատ ստէպ ստէպ էին պատահում։ Հայրը միշտ նախատում էր նրան, որ տղայ է, մեծացել է, բայց առուտուր և փող աշխատելու միջոցը չը գիտէ. իր ուսումն էլ նոյնպէս մի չահաւէտ գործ չէ ցոյց տալիս։ 25 տարին անցած է, սակայն էլի հօր աշխատանքն է ուտում։

Արմենակը ոչինչ ելք չէր գտնում, բայց եթէ մի օր ծածուկ հեռանալ հօր տնից և կամ զրկել իրան կեանքից. այդ պատճառով գնաց իր ընկերի մօտ խորհրդակցելու։

—Բարով Արմենակ, դիմաւորեց նրան ընկերը, ինչպէս ես։

—Է՛հ, Աստուած առնէ այսպիսի կեանքը...։

—Ինչու, ինչ է եղած, փառք Աստուծոյ։

—Չէ, ճշմարիտ, ես եկել եմ վերջին անգամ քեզ հետ խորհրդակցելու։

—Ի՞նչ բանի մասին։

—Որ այսպիսի կեանքով իմ ապրելս ես առլորդ եմ համարում—ասաց և երիտասարդական արիութիւնը կորցնելով ուզում էր լաց լինել. բայց քիչ չանչ առնելուց յետոյ շարունակեց.

—Ախր մի ասա է, Տիգրան, ինչ անեմ. հայրս ինձ հետ թշնամացել է, ինչ է ես Ք-ի աղջիկը չեմ ուզում. ինչ անեմ, ինքս էլ չը գիտեմ։ Ես գիտես «նրան» այն ժամանակվանից եմ խօսք տուած, մթթէ կարող եմ խօսքիցս յետ կենալ, կամ թէ խօսքս էլ չէ, մթթէ ես կարող եմ նրան թողնել և ուրիշին ուզել։

Տիգրանը վաղուց գիտէր Արմենակի և իր հօր յարաբերութիւնները և նոցա մէջ տեղի ունեցած խօսակցութիւնները, բայց էլի հարցրեց.

—Լաւ, հայրդ ինչի է քեզ սոխպում դորանում։

—Զը գիտես էս նիւզաթապաշտ մարդկանց. էն աղջկայ վրա 20,000 ռուբլի փող կայ։

—Լսել եմ թէ ուել է...։

—Ես ինչ գիտեմ, ոչ սրտով ցանկացել եմ, ոչ էլ հաստատը իմանամ. բայց երէկ մայրս մի կնոջ պատմում էր և մանաւորապէս ականջովս ընկաւ, որ աղջկաւորը կարծելով թէ մեր այս ուշանալը փողի սակաւութեան առթիւ է, ապսպրել է թէ իզուր ենք ուշացնում. եթէ այսօր 20,000 ռուբլի

ործարանները բանեցնում են Բէսարաբիայի, Ղրիմի թերթաւոր ծխախոտը, որը տեղական կլիմայի և հողի շնորհիւ արտադրվում է գեղին գոյնով, բայց այստեղի մեր գործարանները բանեցնում են Կովկասի և Ցաճկաստանի արտաբերութիւն, որը անհամեմատ կարմիր է լինում Բէսարաբիայի և Ղրիմի ծխախոտից և հենց առաւելութիւնն էլ դլխաւորապէս գորանումն է կայանում, որովհետև նա հասած, հոտաւէտ և աւելի առողջարար է: Վերջերումս ժողովուրդն էլ հասկացել է այդ և եթէ այսօր ուշի ուշով քննելու լինենք, որ իսկ թամբաքու (և ոչ պապիրոս) գործածողը աւելի առնում է մեր տեղականը, և հենց խորը Ռուսաստանից էլ շատերը այստեղից են տանել տալիս, ինչպէս նաև տեղւոյս „եղբ. Սալի-Օղլի“ գործարանը իւրաքանչիւր տարի Նիժնի-Նովգորոդի տօնավաճառում մեծ քանակութեամբ ապրանք է ծախում իր գործարանի արտադրութիւնից մեծ մասամբ իսկ թամբաքու: Բայց ճշմարիտ է և այն, որ այժմ Թիֆլիսում Ռուսաստանի գործարանի պապիրոսները աւելի են ծախվում, որի պատճառը ոչ թէ թամբաքուի լաւութիւնն է, այլ փաթեթների գեղեցկութիւնը: Ահա տեսնում ենք բերում են մի որ և է տեսակ պապիրոս, գոյնզգոյն նըկարներով կարոբկի մէջ դրած և 6 կոպ. էլ գին նշանակած. ժողովուրդը հեռուից նկատելով նկարը, իսկոյն գիմում և առնում 6 կ. վճարելով 10 հատին: Իսկ մեր տեղական գործարանները փոխանակ այդպիսի նկարների համար փող ծախսելու և 6 կոպ. էլ գին դնելու, աւելի լաւ են համարում հասարակ փաթեթների մէջ դնել և ծախել 5 կոպէկով, ի հարկէ խնայելով ժողովրդի աւել տուած մի կոպէկը: Պարզ է, որ փաթեթը միայն պապիրոսը պահելու համար է, նրա գեղեցկութիւնը և նկարները „փոր չեն կշտացնի“ և ոչինչ օգուտ չեն տայ, ուրեմն էլ ինչու պէտք է թէ գործարանատերը աւելի ծախս անի և թէ առնողն էլ 10 հատին մի կոպ. աւել տայ: Բայց մեր ժողովուրդը չէ մտածում այդ, այլ կարծում է թէ, որպէս փաթեթը, նոյնպէս և ներսի ապրանքը լաւ կը լինի:

Գալով նրան, թէ մինչև 1883 թուի յունվարը 2-դ տեսակ սամոն թամբաքուն ծախվում էր 1/4 գրվանքան 25 կոպ., իսկ այժմ վաճառվում է 30 կոպէկով, մինչդեռ հարկը նրա վրա աւելացած է միայն 3 կոպէկով, և ապրանքի տեսակն էլ չէ լաւացվում, ուրեմն գործարանը այժմ առաջվանից 1/4 գրվանքին 2 կոպէկ աւել է առնում, այդ ասողը նախ խորը քննած պէտք է լինի ծխախոտի նոր կանոնադրութիւնը և գիտենայ, որ բացի մաքսադրոշի (бандероль) բարձրանալուց, աւելացած են և այլ հարկեր, ինչպէս, օրինակ, ծխախոտ կոտորելու ձեռի մեքենայից, որի վրա մի բանող կոտորում է օրական 25—30 ֆունտ, առնվում է և 5 ր. հարկ. բացի այդ, յայտնի է և՝ որ գործարանական նշանակված գնից ծախելու համար առնողներին, ինչպէս Բօստօվի, նոյնպէս և այստեղի գործարանները բուբլուն 20—25% զիջողութիւն են անում (уступка). ուրեմն աւելացրած 5 կոպէկին էլ 1 կոպէկ: Բայց թէ թամբաքուի յատկութիւնն էլ լաւացրած է, դրան ապացոյց է այն, որ մինչև նոր կանոնադրութիւնը 2-դ տեսակ սամոն թամբաքուն ծախվում էր գրվանքան 1 ր ընդհանրապէս, իսկ այժմ նոյն 1 բուբլիանոց թամբաքուն երկու տեսակ է պատրաստվում—լաւ և ցածր. լաւը նշանակվում է 1 ր. 20 կոպ. իսկ ցածրը—80 կ., որ միջին թւով դարձեալ առաջվայ 1 ր. է բռնում, այն զանազանութեամբ միայն, որ այժմ փոխանակ 24 կոպ. մաքսադրոշի՝ վճարվում է 36 կ.: Թող այդ՝ պէտք է ի նկատի ունենալ և այն, որ անցած թուերում գործարանը միջին տեսակ ծխախոտը վաճառում էր 1 ր. 60 կ. գրվանքան և լաւը—2 ր. վճարելով թէ մէկին և թէ միւսին 24 կոպ. մաքսահարկ, իսկ այժմ առաջինը ծախում է 1 ր. 44 կ. գրվանքան և 36 կ. մաքսահարկ վճարում, իսկ երկրորդը—լաւ տեսակը—դարձեալ 2 ր. և 60 կոպ. մաքս վճարում: Ծխախոտի յատկութիւնն էլ ես կը հաստատեմ, որ եթէ աւելի լաւ չէ առաջվանից, գոնէ ոչնչով պակաս էլ չէ: Մի՞թէ դրանք չեն պատճառը, որ մի քանիսները, թէև դեռ չը կայ ոչ մէկը, կը դադարեցնեն իրանց գործունէութիւնը. միայն ով հասա մէջք ունի, նա կը դիմանայ ժամանակաւորապէս:

Իսկ թէ այժմ, իբր թէ ծխախոտի գործարանների անկման պատճառով Կովկասում դադարել են ծխախոտ ցանել, մինչդեռ 60-նական թուերում եռանդով ձեռնարկել էին դրան, այդ էս ցոյց է տալիս գրողի գործին բոլորովին անտեղեակ և անծանօթ լինելը:

Գործին փոքր ի շատէ ծանօթ մարդիք լաւ գիտեն, որ Կովկասում ծխախոտի մեծ ցանքսը սկսվել է ո՛չ 60-նական թուերում, այլ ծխախոտի մաքսային սիստեման Կովկասում ներմուծելուց՝ ի վեր, այն է 1873 թուից, երբ տաճկական ծխախոտի վրա հարկերը ծանրացան:—60-նական թուերում Կովկասի ոչ մի տեղում համարեա ծխախոտ չէին ցանում, իսկ 63 թուին փորձ փորձեց Անանօվը Քութայիսի նահանգում և ստացաւ փոքր քանակութեամբ. այնուհետև 64-ին իշխան Աբաշիձէն դարձեալ քիչ վարել տուեց, նրանից յետոյ Միրզոեվը բերեց ամերիկական սերմից և սիգարայի թութուն ցանեց. դրանցից յետոյ սկսվեցաւ փոքր առ փոքր ծխախոտի ցանքսը Բօրչալուում, Իմիրէթում և այլն. մինչև 73 թուը տարեկան հաշիւ 1500 պուդ ծխախոտ էր արտադրվում Կովկասում, որովհետև վարելու հաշիւ չը կար, քանի որ Ցաճկաստանի ընտիր ծխախոտը առանց մաքսի բերվում էր և պուդը 5—6 և շատը 7 բուբլով, վերջերում մի փոքր էս աւելի, վաճառվում: Իսկ, ասում եմ, ծխախոտի մաքսի սիստեման մտցնելուց յետոյ, երբ Ցաճկաստանի թերթաւոր ծխախոտի վրա ծանր մաքս դրվեցաւ, յօգուտ տեղական արդիւնագործութեան, այնուհետև Ցաճկաստանում այդ ցանքսով պարապվող յոյները, տեսնելով իրանց արտադրած բերքի անկումը, բաւականի բարձրութեամբ դալով մեր կողմերը, սկսեցին ծխախոտ ցանել և նոյն Ցաճկաստանի ծխախոտի 5—6—7 ր. գները ստանալ: Մեր տեղական ժողովուրդն էլ շահ գտնելով նրա մէջ, սկսեց սովորել դրա ցանքսը և հասուցանելը (ծխախոտի ցանելը և հասուցանելը բաւականի հմտութիւն է պահանջում, նա միւս ցանքերի նման չէ) և հետզհետէ աւելացան այդ գործով պարապողները և ներկայումս Կովկասը արտադրում է 20,000-ից մինչև 40,000 պուդ ծխախոտ, նայելով հունձքի յաջող լինելուն: Եւ թէև "Нов. Обоз." յայտնում է, որ անցած տարի սեպհական գործածութեան համար մախորկա (վրացերէն ծէկօ) անդամ չէն ցանել, ընդհակառակը անցեալ տարուայ թէ ցանքսը աւելի շատ է եղած և թէ հունձքը առատ, ուստի և անցեալ տարի Կովկասը տուել է մինչև 40,000 պուդ ծխախոտ. այս պարզ բան է:

Ի վերջոյ, ասեցէք խնդրեմ, եթէ մեր Թիֆլիսի գործարանները աւելի խոշմտաբար չեն վարվել ժողովրդի հետ, քան Ղուիմինը, ինչու մերոնք էլ միլիոնների կամ հարիւր հազարների տէր չեն դարձել նրանց պէս: Չէ՞ որ ապրանքը ստոր տեսակով և թանգ գնով վաճառելով, ինչպէս եզրակացնում է "Нов. Обоз." լրագիրը, աւելի շահ պէտք է ստանան, և քան Ղուիմինը. ո՞ւր է, թող ցոյց տան: Անհաշիւ կերպով ստորացնել որ է տեղի գործարան, որը պիտի վնասէ առևտրին, ի հարկէ հեռու պիտի լինի խրդճից: Մի՞թէ գործարանը մեղաւոր է, որ տեղիս երկրի բերքը կարմիր գոյն ունի, ուստի և կարմիր էլ արդիւնաբերվում է, և դրա համար ժողովրդի մի մասը նրան ցածր է համարում: Բայց թող ուշի ուշով ծխէ և կը տեսնէ, որ այս՝ տեղականը աւելի համով և ճաշակով է, բայց մի բան էլ կայ՝ „Ցանու տերին օրհնեայ տէր չի լինի:“

Յովհաննէս Ստեփանեան

ՑԱՐՈՒԹԻՒՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ.

Կարդալով «Մշակի» 6-դ համարում մի լուր, որից երևում է թէ «Թիւրքիայի հայերը արդէն ընտրել են Ցարութիւն եպիսկոպոսը՝ որին պէտք է ներկայացնեն կաթուղիկոսական ընտրութիւնների ժամանակ, որպէս կաթուղիկոսացու», կը փափաքինք ընթերցողներին ծանօթացնել նրա համառօտ կենսագրութեան հետ:

Ցարութիւն արքեպիսկոպոս Վեհապետեանը ծնուաւ Աղէքսանդրիա 1823-ին. իր ծննդեանէն մի քանի տարուց յետոյ տարվեցաւ Երուսաղէմ և մնաց ս. Յակոբայ հայոց վանքում. այնտեղ միաբանութեան մէջ սովորեցաւ հայերէն նախակրթութիւն, գրել կարդալ, և տաճկերէն ու արաբերէն լեզուները և այնտեղից 1837-ին անցաւ ի Զմիւռնիա, մտաւ այնտեղի Մեսրոպեան վարժարանը՝ և աշակերտեց Անդրէաս վարժապետին: Այնտեղ երեք տարի մընալուց՝ և հայերէն լեզուն ու հայկաբանութիւն սովորելուց յետոյ, 1840-ին գնաց Կ. Պոլիս, մտաւ Ամերիկացւոց գիշերօթիկ վարժարանը, այնտեղ էլ

են տալիս, վաղը մի մեծ գումար էլ կը տանանք... Այնքան կարողութիւնը իրանց երկարոդոցն է:

—Ասում են Քէն շատ մեծ կարողութիւն ունի:

—Ինչ անեմ, թէ կուզ միլիոններ ունենայ, միթէ դու էլ ես այդպիսի հանգամանքում փողը աչքի առաջ բերում:

—Ո՛չ, բայց հէնց ասում եմ էլի...

—Հիմա դու էս ասա, թէ ես ինչ անեմ. կեանքս անտանելի է դառած ինձ հօրիցս այսքան թուք ու մուր ստանալուս համար. ես գիտես, ուրիշ աղջիկ ուզել չեմ կարող. իսկ եթէ այն փողով աղջիկն էլ չուզեմ, հօրս հետ օրերս միշտ այսպէս պիտի անցնեն. ուրեմն լաւ է դորա ճարը առաջուց տեսած... մեռած միանգամից...

Տիգրանը թէև իր ընկերական շրջանում վերջինին նման խօսքեր շատ էր լսած և ինքն ես կեանքը այնքան թանգ չէր համարում, սակայն այդ դէպքում մի տեսակ սարսուռ զգաց:

—Էդ ինչ ես ասում, Արմենակ: Մի՞թէ եթէ դու այդքան սիրում ես նրան, կը վճռես մենակ և միշտ տրտում թողնել նրան զրկելով քո բաղդաւորութիւնից:

Այս կարճ խօսքերը խորը թափանցեցին Արմենակի սիրտը և նա դարձեալ յոյս առաւ մի փոքր միջոց էլ համբերել և Աննայի հետ միասին հեռանալ քաղաքից:

Արմենակի մեծ քոյրը արդէն նշանված էր. մայրը, առանց կանխապէս խորհրդակցելու իր ամուսնու հետ, տուել էր մի իշխանի 5,000 բուբլի կանխիկ և 2,000 ր. էլ մնային իրեղէնների օժիտով թէև աղջկայ հայրը աչքաղրած ունէր Մ. վաճառականի աղջկին, որից դեռ համաձայնութիւն չունէր ստացած: Մի օր Կարապետ էֆէնդին, խանութում նստած ժամանակ, տան ծառան գալիս կանչում է նրան տուն: Գնում և տեսնում է իր տանը իշխանին, տեղեկանում է հանգամանքին և ինքն էլ համաձայնվում իր կնոջ տուած պայմանին: Մի երկու օրից յետոյ կատարվում է նշանադրութեան հանդէսը և նոյն երեկոյ էլ կայանում է կապակցութեան թուղթը, որի մէջ յիշում են աղջկայ տալիք օժիտը մի առ մի և այն՝ որ 5000 ր. հարսանեաց գիշերը կանխիկ պիտի ստացվի, հակառակ դիպուածում իշխանը իրաւունք ունի էլ չը պակվելու և հարսանիքի համար արած ծախքերը յետ ստանալու:

Հասաւ հարսանեաց երեկոն. հարսի բաժինքը երկու օր էր, որ արդէն ուղարկել էին փեսայի տունը, իսկ կանխիկ փողն էլ տան քահանայի վկայութեամբ կանխիկ վճարվեցաւ, ուստի և հարսանեաց հանդէսը ևս անարգել կատարվեցաւ: Սանդուխտին պսակեցին և իշխանի հետ միասին ուղարկեցին իր պատրաստեց տունը: Արդէն անցաւ երեք օր, բայց խեղճ հարսը դեռ իր իշխան ամուսնու երեսը չէր տեսել, բացի հարսանիքի գիշերվանից. նա յուսահատութեամբ մտածում էր:

—Այս է՞ իմ կեանքս. այսպէս պիտի անցնեն իմ օրերս, որոնց սպասում էի սիրաբորբոք սրտով. իշխանուհի անունը կրելու համար միայն ես պակվեցայ... ո՞ւր է, ինչ անեմ—և դառն արտասուքը սկսեց խեղդել նրան:

Այդ միջոցին հարսի մօտ մտաւ նրա սկեսուրը.

—Ի՞նչ է, Սանդուխտ, երեք օր չէ պակվել ես լաց ես լինում... Երեի ձեր տունը միտդ է ընկել:

Սանդուխտը իր մօր կողպէքի ներքոյ ճնչված ապրած էր, սակայն յուսահատութիւնը պատուեց նրա երեսի քօղը և նա սրբելով աչքերի արտասուքը, դարձաւ դէպի սկեսուրը.

—Մեր տունը չէ՞ միտս ընկել, այլ ամուսինս... ահա երեք օր է պակվել եմ, բայց դեռ ամուսնուս երեսը չեմ տեսել...

—Եւ դրա համար ես լաց լինում... մի՞թէ դու ուզում ես, որ նա պակվելով կարէր իր յարաբերութիւնները բոլոր մարդկանց հետ... ողջոյ է, քանի քանի ծանօթներ ունի դրսում, կլուբում... Նրանց հետ տեսնվում կը լինի:

—Թող մի ծանօթ էլ ես դառնայի, ինձ հետ էլ մի անդամ տեսնվէր, ինչ կայ...

—Հիմի որդի, մենք խոմ չենք կարող նրանց փոխել. դեռ ջահիլ ես, ամեն բան չը գիտես... ահա մի տարուց յետոյ նրան մի որդի նուիրիր, տես ինչպէս տանով կը լինի: Դրանց սովորութիւնը այդպէս է: Իմ մարդս էլ, քանի որ դեռ նոր էի պակվել, ամենևին ուշ չէր դարձնում իմ վրա, միշտ կլուբներում, կրուժոկներում էր անցկացնում գիշերները, իսկ երբ ծնվեց որդիս, այնուհետև սկսեց տուն շուտ շուտ գալ... մի նեղանայ... ասաց և դուրս գնաց:

Սանդուխտը դարձեալ ընկաւ մտածմունքի մէջ:

—Ի՞նչ անեմ, ո՞ւմ դիմեմ. այս կեանքս անտանելի է. նրա ասելով ուրեմն դեռ մի և դուցէ էլ աւելի տարի այսպիսի կեանք պիտի վարեմ... Ա՛խ Աստուած, ինչ անեմ. Արմենակը երեի գիտէր այդ և դրա համար իմ վճռին էր թողնում պակվելս...

Այսպէս խոր մտածմունքի մէջ ընկղմվելուց յետոյ վերջը որոշեց գրել Արմենակին, որ գայ և նրան յայտնէ իր ցաւը. այդ պատճառով նա մօտեցաւ իշխանի հնամաշ տեղանին, առաւ գրիչը, գրեց մի տոմսակ և իր սկեսրայրից ծածուկ տուեց որ Արմենակին հասցնեն: Իսկ ինքն դարձեալ սկսեց իր դառն վիճակը ողբալ:

Իշխանը հարսանիքի գիշերը առնելով 5000 ր. կանխիկ փողը, բերեց հարսին տանը թողեց, իսկ ինքն դուրս պրծաւ գնաց կլուբը. մի քանի պարտքեր ունէր վճարեց. թուղթ խաղաց, մի քանի հարիւր բուբլի էլ տանուլ տուեց և վերջը արդէն մոռանալով իր հարստացուին, երկու ընկերի հետ գիմեց իր սիրեկանի տունը. այնտեղ այն բոլ փողովը կերան, խմեցին, քէֆ արին և յետոյ ընկերները հեռացան, գնացին իրանց տները հանգստանալու, իսկ նորապսակ իշխանը ծանր ծնկի տուած նստած էր այդ բօպէապէս ամենից սիրված տիկնոջ հետ, ախորժելի մասլահաթ անում, լաւս խաղում...

Քրոջ տոմսակը արդէն հասել էր Արմենակին, որին խնդրում էր չատպել իր մօտ: Արմենակը շուարած խակոյն գիմեց նորապսակ քրոջ տունը և գտնելով նրան մենակ լաց լինելիս, զարհուրած հարցրեց.

—Ի՞նչ է, Սանդուխտ-ջան, էդ ինչ է եղել. ախր երեք օր է դեռ և լաց ես լինում...

—Ի՞նչպէս լաց չը լինեմ, Արմենակ-ջան, երեի դու առաջուց գիտէիր... ամուսինս սանքաղ երեք օր է տուն չէ եկել, չը գիտեմ կենդանի է, թէ ոչ...

—Հանդստացիր, Սանդուխտ, լացով բան չի լինի, ես մասամբ գիտէի և երէկ էլ տեղեկացայ,

սովրեցաւ անգլիերէն, թուաղիտութիւն, բնակ. վիճակագրութիւն և տպագրագործութիւն։ Ապա 1843-ի օգոստոսի մէկին առաջնորդաւորեալ նաւով ճանապարհորդելով անցաւ Մեծ ովկիանոսը և հասաւ Նիւ-Եօրկ Ամերիկայի Միացեալ Նահանգների նաւահանգիստը. իր նպատակին համեմատ՝ երբեմն Բոստոն և երբեմն Նիւ-Եօրկ կը շրջէր և մնաց այնտեղ ճիշտ երկու տարի, և երկու տարուց յետոյ շնչարգել հիւանդութեան պատահելով՝ ստիպվեցաւ 1845-ին ապրիլի 25-ին Կ. Պոլիս վերադառնալ։ Նոյն տարին որ Պոլիս եկաւ, Մատթէոս պատրիարգի հրամանով Լանկայի լուսաւորչեան վարժարանին անդրիերէնի և թուաբանութեան դասախօս եղաւ. երկու տարուց յետոյ 1847-ին իր բարերարի—Երուսաղէմի Կիրակոս պատրիարգի հրաւիրանքով Երուսաղէմ գնաց և եղաւ ներքին քարտուղար նորին սրբազնութեան։ Երկու տարուց յետոյ աւագ սարգաւագ ձեռնադրվեցաւ ամենապատիւ Կիրակոս պատրիարգից, որի վախճանից յետոյ յաջորդ նորընտիր պատրիարգ Երուսաղէմի—Զմիւռնայի Յովհաննէս սրբազանը հրաւիրելու համար Կ. Պոլիս գնացող պատգամաւորներից մէկը եղաւ ինքը և 1850-ին Երուսաղէմ դարձաւ նորին սրբազնութեան հետ, որի ժամանակ այլ ևս Երուսաղէմ մնալ կարելի չը լինելով—որովհետև օդի խստութենից սաստիկ նեղութիւն կը կրէր, խնդրեց ս. Աթոռի կառավարութիւնից՝ և նրանց հրամանագրով և հաճութեամբ 1851-ին կրկին Պոլիս դարձաւ։ Նոյն տարուայ դեկտեմբերի 9-ին Ախմաչ-Զարնափան ս. Աստուածածնի վանքը, Կ. Պոլսոյ Ա. պատրիարգ Աղաւնի Տ. Ստեփան արքեպիսկոպոսից Երուսաղէմի միաբան—վարդապետական մանաւոր իշխանութիւններով վարդապետ ձեռնադրվեցաւ, հրամանաւ Թիւրքիայի պատրիարգ Տ. Յակոբ սրբազան արքեպիսկոպոսին. 1852 մայիսի 25-ին Յակոբ սրբազան պատրիարգի հրաւիրմամբ Պոլիս գնաց և ընդ հովանաւորութեամբ նորին սրբազնութեան գաւազանակրութեան և ժամ-օրհնողութեան պաշտօնով պատրիարգարանում մնաց. 1853-ին նորին սրբազնութիւնից ծայրագունութիւն ընդունելով Կ. Պոլսի պատրիարգական փոխանորդ եղաւ։ Չորս տարուց յետոյ 1857-ին ապրիլի 20-ին, խարբերդի 4 միայնակ վիճակների վրա առաջնորդ կոչուեցաւ։ Այնտեղ գնալով վիճակները բարեկարգեց, և երկու էլ ժողով հաստատելով, դարձեալ ըստ հրաւիրանաց սրբազան պատրիարգին Կ. Պոլիս վերադարձաւ, չը կարողանալով դիմադրել ժողովրդեան թախանձանաց՝ որոնց կողմից երեք անգ՝ երկու իշխանական և մէկ կրօնական—Աբշարունի Տ. Յովհաննէս վարդապետը, Յարութիւն վարդապետ Վեհապետեանի վերադարձին համար Պոլիս կը գնային, ազգային պատրիարքարանում պատգամաւոր լինելու. ի զուր։ Յարութիւն վարդապետ Վեհապետեանը նորից Կ. Պոլսի պատրիարգական փոխանորդ եղաւ։ 1858-ին, Գէորգ սրբազան պատրիարգի օրով, որից մէկ տարի վերջը, այն է 1859 ապրիլի 24-ին Կարնոյ առաջնորդ կարգվեցաւ, որ դժուարաբար ամենամեղմ վիճակի մէջ էր այն երկրաշարժի պատճառով, որ ամեն տեսակ վնասներ հասցրել էր, վանքեր, եկեղեցիներ, դպրոցներ, աներ և այլն... քանդել և աւեր էր դարձրել. այդ տարուն էր, որ վեհափառ Մատթէոս կաթուղիկոսը վարդապետական ականակուռ խաչի նշանով պատուեց նրան։ Այս միջոցում Վանում աղգին և նրա առաջնորդ Խրիմեան վարդապետին մէջ սաստիկ խռովութիւն ծագած լինելով Կ. Պոլսի սրբազան պատրիարգի և ազգային գերագոյն ժողովի հրամաններով հոկտեմբերի 12-ին Վան գնաց, և նրանց խռովութիւնները խաղաղացնելով 45 օրից Կարին վերադարձաւ։ 1860 յունիսի 2-ին եպիսկոպոսութեան աստիճանին բարձրացաւ, ձեռնադրվելով վեհ. Մատթէոս կաթուղիկոսից, ընդունելով և վիճակի գիր արքեպիսկոպոսութեան և ականակուռ պնակէ նշան։ Իր առաջնորդութեան օրով՝ ս. Լուսաւորչի Վանուց (Կարնոյ վիճակին մէջ) երկրաշարժից կործանած եկեղեցին նորից չինեց իր յարակից սենեակներով առաջուանից աւելի գեղեցիկ. չինեց նոյնպէս Կարնոյ առաջնորդական ամառանիստ եկեղեցու զանգակատունը չորս սիւների վրա կարմիր սրբատաշ քարերով, Պատրիարքաճեանց խաչատուր էֆէնդիի բարեպաշտական ծախքով։ Այս տարուայ մէջ նորին սրբազնութիւնը երկու տաճկական նշան ընդունեց, մին՝ մէճիդիէ 4-որդ կարգի չքանչան սուլթան Մէճիտ կայսրից, և միւսը Մեճ. 3-որդ կարգի պատուանշան սուլթան Ապդուլ Ազիզ կայսրից։ Դարձեալ իր առաջնորդութեան երրորդ տարում՝ այսինքն 1862-ին Կարնոյ արքեպիսկոպոսարանը չինեց յարակից հիւրանոցներով և կրպակներով ի միասին. և մէկ տարուց վերջը Արծնեան գեղեցկաշէն ուսումնարանը, Մակարեան մահտեսի Յակոբ էֆէնդիի ծախքով. 1865-ին պատրիարգարանի հրամանով և եպարքոսական (սաղրաղամ) հրամանագրով՝ Աղթամարայ Պետրոս կաթուղիկոսի սպանութեան խնդիրը քննելու համար նորից Վան գնաց։ Մէկ տարուց յետոյ Թիւրքից կողմանէ Դէորգ կաթուղիկոսի օծութեան ներկայ գտնվելու համար Էջմիածին գնաց և այս պատճառով Ռուսոյ Կայսրից պատուեցաւ Ա. կարգի Անապի թագաւորական խաչով՝ ատամներով և ժապաւէնով։ Ընդունեց նոյնպէս 1877-ին թիւրքօ-ռուսաց պատերազմի ժամանակ սուլթան Համիդ բ. կայսրից 3-որդ կարգի օսմ. պատուանշանը՝ ի վարձ իր հաստատամիտ ծառայութեան, նոյնպէս Կարնոյ հայոց պարսիկների հետ ունեցած տարաձայնութեանց համար հայերի իրաւունքը պաշտպանող քաջ պատրաստեան հանդիսացաւ օսմանեան կառավարութեան առաջ։ Դարձեալ իր առաջնորդութեան օրով՝ այն է 1869-ին չինեց Կարնոյ աղջկանց վարժարանը, այսպէս և ուրիշ այլ և այլ բազմաթիւ. չինքեր, եկեղեցիներ, դպրոցներ չինեց Կարնոյ և նրա վիճակների մէջ. մանաւանդ Կարին քաղաքի այդ նորաշէն հոյակապ և մեծագիր վարժարանը Յարութիւն արքեպիսկոպոսի գործերի վերջին երկն է. և 1859—1880-ը քան և մէկ տարի ամբողջ Կարնոյ ընդարձակ վիճակի վրա հովուական հոգեոր և մարմնաւոր պաշտօնը, բազում խղճով, հոգւով և ողջմտութեամբ վարելէն զկնի 1880-ին մարտի 15-ին կամաւորապէս հրաժարվեցաւ այնտեղից և նոյն տարուայ ապրիլի 24-ին մեկնելով այնտեղից գնաց Երուսաղէմ, որի բնիկ միաբանն էր արդէն, ուր է այժմ Երուսաղէմի պատրիարգական փոխանորդութեան պաշտօնով։ Ահա այս է Յարութիւն արքեպիսկոպոս Վեհապետեանի ճիշտ և անսխալ ամենակարճառօտ կենսագրութիւնը։

* * *

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Որպէս հաղորդում են «Новости» լրագրին, վարչական շրջաններում ստացված տեղեկութիւնների համեմատ, կոլերական անտեսութիւնը հիւսիսային նահանգներում տարից տարի ընկնում է։ Շատ կալուածատէրեր բոլորովին ցանքը դադարեցրել են, այնպէս որ մի քանի տեղերում կալուածատէրերը վարում են միայն դաշտերի ընդհանուր քանակութեան 5 և մինչև անգամ 10 պրոցենտ։

—

«Юрид. Обозрѣніе» շաբաթաթերթի մէջ կարդում ենք հետևեալը. «Որպէս յայտնի է, վաղուց արդէն կարգադրութիւն է եղած այն անձանց ցուցակները կազմելու համար, որոնք կարող են ընտրված լինել պատգաւոր հաշտարար դատաւորների պաշտօնով, որոնք կարելի է մացվեն Անդրկովկասում։ Այդ ցուցակները պէտք է կազմել նահանգապետը նահանգական դատարանի նախագահի համաձայնութեամբ։ Մեզ հաղորդում են, որ դատարանի նախագահ Վ. Վ. Սմիրնովն աւելի անսխալ կերպով ցուցակագրելու համար այն անձանց, որոնք խոսալիս իրաւունք ունեն պատգաւոր հաշտարար դատաւորներ լինելու, հրաւիրեց տեղական հաշտարար դատաւորներին իրանց կարծիքը յայտնելու առաջարկված կանդիդատների մասին և մասնաւորապէս անել, իրանց կողմից, և ուրիշների վրա, որոնք պատուով կարող էին վարել այդ պատուաւոր պարտաւորութիւնը։ Պ. Նահապետի կողմից ամսի 17-ին երևակեան այդ նպատակով հրաւիրված դատաւորները քննում էին ցուցակները, անում էին իրանց ցուցմունքները և առաջարկութիւնները, բայց ցուցակները վերջնականապէս դեռ կազմված չեն, որովհետև լրացուցիչ տեղեկութիւններ պահանջվեցան մի քանի անձանց մասին։

Անդրկովկասեան երկրի Կիզիլ-Արվատի հայ հասարակութիւնը ուղարկել է «Մշակի» խմբագրութեանը 38 բուբլ որպէս դի 10 բուբլիով տարեկան «Մշակը» ուղարկենք, իսկ մնացած 28 բուբլի դրվենք «Մեղու», «Նոր-Դար» «Արծագանք», և «Այրարատ» հրատարակութիւններին։ Ցիշեալ 28 բուբլին նամակով հասցրինք Թիֆլիսի Կենտրոնական դրամատունը։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Թավրիզ, յունվարի 8-ին

Հաստատ աղբիւրից տեղեկացայ, որ Պարսկաստանի Շահրութ *) քաղաքում պարսիկները միաբանել են կոտորել այնտեղի բոլոր հայերին անցեալ դեկտեմբերի 20-ին և միայն ի հնարս Նասրէդդին Շահին չէ յաջողվել այդ չարագործութիւնը։ Շահրութից ստացված նամակի համաձայն՝ պատճառը հետևեալն է.—Մի թուրք ծառայ մի քանի բանալիներ է չինել տալիս և նրանցով բանալով հայ վաճառականների մագազինները, փող է գողանում. հայերը յանցաւորին բռնում են գողութեան ժամանակ և յանձնում դատարանին, որը պատժում է թուրքին։ Սրանով վիրաւորվում է թուրքերի կրօնական զգացմունքը, որ հայերի խօսքով պատժում են մի մահմեդականի. սրբատունջը հետզհետէ ընդհանրանում է և այս հանգամանքից օգուտ քաղելով պատժված թուրք ծառան, գնում է իրան նման մի քանի սրիկաներ և ընկնելով փողոցները՝ «հարայ» է կանչում թէ «հայերը մահմեդական կրօնը «հայհոյեցին»։ Գիտէք արդէն թէ այս խօսքը ինչ նշանակութիւն ունի մահմեդականների բերանում։ Իսկոյն բոլոր քաղաքը ոտքի է կանգնում, կողոպում են բոլոր խանութները և յարձակվում հայերի վրա։ Ամբոխին առաջնորդում էին և ղեկավարում «սէյիդների» (մարգարէի ժառանգներ). և մոլլաների խմբեր, մինչև անգամ նոյն ինքն Մուշտէիդը (հոգեոր գլուխ) քաջալերում էր ամբոխին՝ թափել «անօրէն հայի» արիւնը։ Հայերը ամենքը փախչում և ապաստանում են հեռագրատունը և անմիջապէս հեռագրում են ռուսաց դեսպանին (մեծ մասը ռուսահպատակ հայեր են) Թէհրան և Պարսից ներքին գործոց նախարարին։ Հինգ օր շարունակ հայերը չեն կարողանում դուրս գալ հեռագրատունից և շատերը ծեծվում են. այդ հինգ օրուան ընթացքում, շարունակ հեռագրներ են տեղում Թէհրանից թէ հոգեոր և թէ մարմնաւոր իշխանութեան վրա, որ դադարեցնեն ապստամբութիւնը, բայց հնար չէ լինում. վերջապէս Շահը ինքը գալիս է հեռագրատուն և նստելով հեռագ-

*) Շահրութ ու Սալմաստ ամենահարուստ գաւառներից մէկումն են գտնվում։

որ նա փուչ կեանք է վարում. ինչ անենք, ամեն բան արդէն անցել է... ես գիտեմ նա որտեղ կը լինի, կը գնամ և գուցէ կը բերեմ։

—Եթէ կարելի է ես էլ գամ, Արմենակ, աղերսում էր քոյրը։

—Աւելորդ է, բայց եթէ ցանկանում ես, արի մանգալով գնանք, գուցէ քո անձնաւորութիւնդ աւելի ազդէ նրա վրա։

Քոյր և եղբայր, առանց ոչ ոքի իմացնելու, դուրս եկան տնից և գնացին։

Իրաւ, Արմենակը գիտէր փեսայի տեղը, ուստի ուղղակի դիմեցին այնտեղ։ Ճանապարհին քրոջը խրատում էր, որ կնոջ յատուկ թուլասրտութիւնը մի կողմ թողնելով, ամուսնուն որ և է դրութեան մէջ տեսնելիս անվրդով, հանգիստ և խաղաղ մնայ։

Նրանք հասան իրանց մտադրած չէնքին։

Այդ միջոցում իշխանը դրպանիցը հանած մի քանի հատ 100 բուբլիանոցներ ցոյց էր տալիս իր սիրեկանին, խրախուսելով որ իր այդին (որ իր միակ մուլքն էր) դրսից թափել է, և այդքան էլ կանխիկ փող ունի։ Այդ բոլորում Արմենակը բացեց չէնքի դուռը։ Փեսան տեսնելով, իսկոյն մոռացաւ բոլորը և սարսափած թողեց փողերը ու, դիմացկի դռնով դուրս թռաւ. սիրականը հասկանալով բանը՝ չուարած մնաց. Սանդուխտը ևս հետևեց եղբօրը։

Արմենակը մօտեցաւ սեղանին, հաւաքեց փողերը և յետոյ հարցրեց.

—Ո՞ւր գնաց Իշխանը։

—Չը գիտեմ, դուրս գնաց, գուցէ էլ յետ չը դայ։

—Ինչպէս, ահա նրա պալտօն այստեղ է։

—Դա նրանը չէ, ուրիշ իշխանինն է, մոռացել թողել է այստեղ։

Արմենակը խիստ հասկացաւ, որ փեսան փախաւ, ուստի ինքն էլ ուզում էր դուրս գնալ, երբ տանտէրը կոչելով առաջը, պահանջում էր վերցրած փողերը, ասելով որ նրանք իր ամուսնու աղջկանն են։

Ո՞վ է ձեր ամուսինը—հարցրեց Արմենակը։

—Մ՚թթէ չը գիտէք... իշխանը։

—Մ՚թթէ նա պակված է քեզ հետ։

—Եթէ առանց պակի լինի, այլ և ամուսին հաշուել չեն կարող։ Ահա քանի տարի է մենք միասին ենք ապրում։

Սանդուխտը լսելով այդ ուշաթափվեցաւ։ Եղբայրը առաւ նրան, բերաւ տուն և զատաւ փոխին տանը անվրդովում պառկած։

—Անզգամ—կոչեց Արմենակը—չէս ամաչում. այդ ինչ բան է, որ դու մեր դլխին ես բերում։

Փեսան քարացածի նման ոչինչ չը պատասխանեց։

Արմենակը բոլորական յուզման մէջ ուզում էր քրոջը վեր առնել և գնալ իրանց տունը, բայց չէմքում դիմաւորեց նրանց Իշխանի մայրը, որը նախ մեղադրեց իր որդուն և ապա խնդրում էր Արմենակին և Սանդուխտին, որ ներողամիտ լինեն, որովհետև իր որդին դեռ ջահել է, ընտանեկան կեանքի քաղցրութիւնը չը գիտէ, յետոյ լաւ կը լինի։ Արմենակը սաստիկ ամօթով ինքն էլ խնդրեց քրոջը հանդարտվել և թողնելով դուրս եկաւ։

Արմենակի ծնողների համար մեծ ցաւ դառաւ այդ դէպքը. նրանք երկար ժամանակ դրա վրա էին մտածում և վշտանում։

Իշխանը առած փողերի մեծ մասը արդէն վատնել էր. մնացածն էլ կարճ միջոցում ձեռքից հանեց և դարձեալ մնաց այն դատարկն ու այն դատարկը։ Աշխատասէր և ամօթիած Սանդուխտն էր, որ իր ձեռքի դառն աշխատանքով պահում էր իր տունը։

Արմենակի ծնողների համար մեծ դժբախտութիւն էր այդ։ Քանի քանի տեղերից խնդրել էին Սանդուխտի ձեռքը, բայց մայրը չէր ընդունել. նա ընտրել էր կնեազի վայելուչ հասակը, առանց քննելու նրա բարոյականութիւնը, որը դառնութեան պատճառ դառաւ։

Ժամանակաւորապէս դադար առաւ Արմենակի պակվելու հարցը։

Արմենակի աչքացրած օրիորդը վերջնական քննութիւն տուեց, ուսումնարանից հաստատութեան վկայականը առաւ, և Արմենակի հետ միասին ուղևորվեցաւ Պետերբուրգ։

Այնտեղ նրանք ամուսնացան և իրանց սուղ միջոցներով սկսեցին ապրուստը հայթայթել։ Նրանք մանաւոր դասերով պարապվելով, կարճ միջոցում մի փոքր դումար ձեռք բերին և հիմնեցին մանաւոր ուսումնարան։ Տարի ու կէսում այնպիսի յառաջադիմութիւն ցոյց տուին, որ զրաւեցին մայրաքաղաքի երևելի մարդկանց համակրութիւնը. բոլորը աշխատում էին նրանց մօտ տալ կրթվելու իրանց որդուցը։ Արմենակի էլին Աննան այնքան աղնիւ, խոհեմ և քաղաքավարի էր, որ համարձակ մուտքի արտօնութիւն ունէր ամենամեծ մարդկանց տներում։ Այդպէս նրանք ձեռք ձեռքի տուած աշխատելով, կարճ միջոցում բաւական առաջացան, հարստացան, ունեցան որդիք և ուրախ ու երջանիկ ապրում էին։ Իսկ Արմենակի հայրը իր երկու աղջկանց մարդու տալուց յետոյ անպաղդութեան մէջ ընկաւ. մնանկացաւ. ունեցած բոլոր փողերը ձեռքից դուրս գնաց, խանութում ունեցածը աճուրդով վաճառվեցաւ, մնաց խղճալի դրութեան մէջ։ Այդ ժամանակ Արմենակը իր ամուսնու հետ դրեցին հօրն ու մօրը և երկու եղբարցը բերին իրանց մօտ, ուրախացրին նրանց և սկսեցին աւելի խաղաղ և ուրախ ապրել։ Աննան լաւ կրթում էր իր մանուկներին. նրանք փոքր հասակից խելացի կերպով ընտելանում էին բոլորին։ Արմենակի հայրը տեսնելով այդ բոլորը, այն ժամանակ միայն հասկացաւ, որ Արմենակը ճշմարիտ էր ասում, որ կնոջ բերած արտաքին նիւթական հարստութիւնը անցաւոր է, այսօր կայ, վաղը չը կայ, իսկ ներքին հարստութիւնը յաւիտենական գանձ է, ուր որ գնայ, իր յետ կը լինի։ Այնուհետև նա մտաբերելով այնքանը, զարհուրում էր թէ ինչ մեծ դժբաղդութիւնն եղած կը լինէր արդեօք, եթէ Արմենակը ստիպված ուզած լինէր հարուստ, բայց տգէտ օրիորդին և նրա բերած փողն էլ հարկաւ իւր ունեցածի հետ ձեռքից դուրս գնացած, ինչ օրում կը լինէին արդեօք։

Այդ պատճառով նա դղջաց իր վարմունքի վրա, ներողութիւն էր խնդրում Արմենակից և անչափ շնորհակալութիւն յայտնում իր հարսին, որ այնքան բարի, խելացի և բաղդաւոր է։ Իսկ առաւօտները առանց բացառութեան փառք էր տալիս Աստուծուն, որ այժմ հանգիստ ապրում էր, շնորհիւ իր հարսի ներքին գեղեցկութեան և հարստութեան։

Յովհ. Ստեփանեան

րի մեքենայի կողքին խոտիս հրաման է ուղարկում զինուորականների դիմաւորին, որ եթէ անմիջապէս չը ցրվեն խռովարարներին և հայերին ազատ չը թողնեն, իսկոյն երկու բանակ զօրք արձակէ Շահրութի վրա և թնդանօթները կապէ ու աւերէ. միայն այս սարսափելի խիստ հրամանը կարողանում է ցրուել կատաղի պարսիկների ամբոխը: Միայն մեդալի միւս երեսն էլ կայ և ես պարաք եմ համարում այն էլ ցոյց տալ:—Շահրութը փոքրիկ վաճառաշահ քաղաք է և ահագին քանակութեամբ ապրանք է դուրս գալիս այդ տեղից (մեծ մասը մաղեղէն): Մինչև հայերի այդտեղ բուն դնելը բոլոր առևտուրը տեղացի պարսիկների ձեռքին է եղել, իսկ երբ հայերը եկել են, իրանց սովորական ճարպիկութեամբ առևտուրը խլել են պարսիկներից և պարսիկները անընդունակ լինելով մրցման, վաղուց դրգռված են հայերի դէմ և միշտ յարմար առիթ են փնտռում կարճ ճանապարհով հայերի հետ հաշիս տեսնելու: Այս մասին թողնենք ուրիշ անգամի:

Այդ դէպքը մեծ խռովութիւն է պատճառել պարսկական կառավարչական շրջանում (Թէհրան) և վեհափառ շահը խստիս հրամայեցրել է, որ «մոլլաներին» (կարդացող) դուրս անեն Շահրութից:

***

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 յունվարի: Թագուհուն ներկայացվեցաւ Կարագլինի պատկերը, որ ներկայացնում է այն նշանաւոր բոպէն թագադրութեան տօների ժամանակ, երբ թագաւորը վոլոստների ստարշինաներին ուղղած ճառ արտասանեց: Լուրերի համեմատ այդ պատկերից մեծ քանակութեամբ օլէոգրաֆիաները կը տպվեն և կը կախվեն վոլոստների բոլոր վարչութիւնների և ժողովրդական ուսումնարանների մէջ: Լրագրական լուրը՝ անձնական հարկի վերաբերութեամբ պետական խորհուրդին մի օրինագիծ ներկայացնելու մասին պաշտօնապէս հերքվում է: Աստրախանի նահանգապետ և Աստրախանի կազակ զօրքերի ատաման գեներալ-մայոր Պէտրով նշանակվում է ժանդարմների առանձին բաժնի շտաբի կառավարիչ: Լրագիրները հաղորդում են, որ նախագծված է զօրքերի մէջ պարտադիր ծառայութեան ժամանակամիջոցը երկարացնել առաջին և երկրորդ կարգերի կամաւորների համար մի տարով, իսկ նոյն կարգերի վիճակով ծառայողների համար մէկ և կէս տարով:

ՓԱՐԻԶ, 19 յունվարի: 3 պրոցենտական նոր ըէնտայի հրատարակութիւնը կը կայանայ փետրվարի 10—15-ը:

ՐԻԳԱ, 19 յունվարի: Երէկ պոլիցիան գտաւ կեղծ թղթադրամ շինողների մի խումբ. այդ խմբի մօտ գտնվեցան կեղծված թղթադրամներ, մանր դրամներ, և նոյնպէս գործիքներ: Ցանցաւորներից մի քանիսները կալանաւորված են:

ՎԻԷՆՆԱ, 19 յունվարի: Վերջին ժամանակներս կրկնվող քաղաքական սպանութիւնները և առհասարակ անիշխանականների գործունէութիւնը Վիէննայում և գաւառներում հարկադրեցին կառավարութեանը բացառական միջոցներ գործ դնել Վիէննայի, Կրոնէյբուրգի և Վինէրնէյշտատի դատաստանական շրջանում: Այդ միջոցներին ենթադրվում են ի միջի այլոց կասկածաւոր նամակները և մամուլի յօդուածները, որոնք վտանգաւոր կը համարվին: Վիէննայի դատաստանական շրջանում վերացված է նոյնպէս երդուեալ դատարանի գործողութիւնը:

ԼՕՆԴՕՆ, 19 յունվարի: Ֆոնդային մակլէրներ՝ Պ. Վ. Թոմաս, որդիք և ընկերութիւն դադարեցրին հատուցումները. պասսիվ (պակասորդը) 800,000 ֆունտ ստերլինգ է:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Դերբենդի հայոց ուսումնարանի համար պահանջում են երկու ՎԱՐԺԱՊԵՏՆԵՐ, մէկը հայոց լեզուի համար, միւսը ռուսաց լեզուի համար: Պայմանների մասին դիմել պ. Բաֆֆիին:

3—5

КЕЛЕРСКАЯ
УКСУСНАЯ ЭССЕНЦІЯ.

50—50

КАВКАЗСКІЙ АДРЕСЪ КАЛЕНДАРЬ

Съ картою Кавказа продается во всѣхъ книжныхъ магазинахъ Тифлиса по 1 р. 50 к. За пересылку во всѣ города имперіи по 25 коп.

1—5

ԿԻՐԱԿԻ, ՅՈՒՆՎԱՐԻ 22-ԻՆ

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆՈՒՄ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱՑ

ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

ՑՈԳՈՒՏ

ՀԱՅԵՐԷՆ ԳՐՔԵՐԻ ՏՊԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Տոմսակների գինն է՝ կանանց 1 ր. տղամարդկանց 2 ր.

ՍԿԻԶԲՆ Է ԵՐԵԿՈՅԵԱՆ 9 ԺԱՄԻՆ:

Տոմսակները վաղօրոք կարելի է ստանալ պ. Ծատուրեանի խանութում, կենտրոնական գրավաճառանոցում, Շահվերդեանի լրագրական գործակալութեան գրասենեակում և Թիֆլիսի ժողովարանում:

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ."

Երկուշաբթի, 16-ին յունվարի հասաւ ՓՕԹԻ ԱՐՄԵՆԻԱ (L'ARMÉNIE) շոգենաւը, որի նաւապետն է ԴՈՒՇԷՆ (Duchesne).

Տեղեկութիւնների համար դիմել ընկերութեան ագենտներին. ՓՕԹԻՈՒՄ պ. Գարանիօնին, ԹԻՖԼԻՍՈՒՄ պ. Բլնօին, Արծրունու գալերէում № 194.

4—5

СЪ 1-ГО ЯНВАРЯ 1884 Г.

ВЪ Г. ТИФЛИСѢ ИЗДАЕТСЯ

НОВАЯ ЕЖЕДНЕВНАЯ

ЛИТЕРАТУРНО-ПОЛИТИЧЕСКАЯ ГАЗЕТА

„НОВОЕ ОБОЗРѢНІЕ"

(350 №№ въ годъ)

подъ редакціею А. В. СТЕПАНОВА (бывшій редакторъ «Юридическ. Обозрѣнія»).

Объемъ газеты печатный листъ средняго формата. Программа,—общая всѣмъ литературно-политическимъ изданіямъ.

ПОДПИСНАЯ ЦѢНА: съ доставк. и перес. на ГОДЪ 10 рубл., ПОЛЪ года 6 р., ТРИ мѣсяца 3 р. 50 к. ОДИНЪ мѣсяцъ 1 р. 25 к.

Городская и иногородная ПОДПИСКА принимается въ Тифлисѣ въ газетномъ агентствѣ ШАВЕРДОВА.

Въ Петербургѣ и Москвѣ въ книжн. магаз. «Новаго Времени».

Временное помѣщеніе редакціи: на Давыдовской улицѣ, домъ Кананова, квартира редактора.

1—5 (1).



ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱՅԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Զ Ի Ն Գ Է Ր

ՆԻՒ-ԻՕՐԿԻ ՄԷՋ

ԿԱՐԵՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԱՄԵՆԱԸՆԴԱՐՁԱԿ ԳՈՐԾԱՐԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՄԷՋ:

Ծախում է ամենալաւ համարված կարեմեքենաներ նպաստող նոր գործիքներով և նոր պատուանդաններով, որոնք պահպանում են փչանալուց, գործելու ժամանակ աղմուկ չեն հանում և թեթև ընթացք ունեն աշխատանքի ժամանակ, այնպէս որ ամենաթոյլ և ծեր մարդիկ կարող են նրանց կառավարել առանց ոյժերը սպառելու: Ծախվում է

ԿԷՍ ՄԻԼԻՈՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻՑ ԱՒԵԼԻ ՏԱՐՎԱՑ ԸՆԹԱՑՔՈՒՄ:

Այս իրողութիւնը ամենալաւ ապացոյց է Զինգերի կարէմեքենաների համար:

ՆԱԽԱԶԳՈՒՇՈՒԹԻՒՆ. Զինգերի իսկական կարեմեքենաները մեծ վարկ ունեն, որովհետև իրանց գեղեցիկ յատկութիւններով ամենքին զմայլեցնում են և այդ պատճառով ուրիշ գործարանները նրանց կեղծում են և ծախում են Զինգերի իսկական կարեմեքենաների տեղ: Զգուշացնում եմ ձեզ, որ Զինգերի իսկական իւրաքանչիւր կարեմեքենան The Singer Manufacturing C-o ֆիրմայից ունի գործարանի գրոշմներ մեքենայի կոթի և մամուլի վրա. The Singer Manufacturing C-o

Գ. ՆԷՑԴԼԻՆԳԵՐ, ԹԻՖԼԻՍ, ԳՕԼՕՎԻՆՍԿԻ ՓՈՂՈՑ, ՏՈՒՆ ՄԻՐԻՄԱՆՕՎԻ

ԲԱԹՈՒՄԻ մէջ Պոլիցէյսկայա փողոց, տուն Թերզի-Օղլի:
ՔՈՒԹԱՅԻՍԻ մէջ Միխայլովսկայա փողոց, տուն Շնէյդերի:
ԲԱԳՈՒԻ մէջ Միխայլովսկայա փողոց, տուն Միրզա-Աւագովի:

Իւրաքանչիւրին միջոց տալու համար ձեռք բերել Զինգերի ամենաօգտակար և իսկական կարեմեքենան կարելի է գնել փոքր մուտքերով, այսինքն շաբաթական 1 ռ. 50 կ. վճարելով առանց իսկական գինը բարձրացնելու: Հնացած մեքենաները խանութը փոփոխում է:

34—50 (1)

Дозволено цензурою, Тифлисъ, 20 Января 1884 года. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час., Лорисъ-Меликовская ул., д. каз.